

**ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԻ ԵՎ ԽՈՐՀՐԴԻ 2002 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 19-Ի ԹԻՎ  
1606/2002 (ԵՀ) ԿԱՆՈՆԱԿԱՐԳ**

**Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների կիրառման մասին**  
(ՊՏ, L 243, 11.09.2002թ., էջ 1)

Փոփոխված՝	Պաշտոնական տեղեկագիր		
	համար	էջ	ամսաթիվ
Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2008 թվականի մարտի 11-ի թիվ 297/2008 (ԵՀ) կանոնակարգ	L 97	62	9.04.2008

**ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԻ ԵՎ ԽՈՐՀՐԴԻ 2002 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 19-Ի ԹԻՎ  
1606/2002 (ԵՀ) ԿԱՆՈՆԱԿԱՐԳ**

**Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների կիրառման մասին**

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը և,  
մասնավորապես, դրա 95(1) հոդվածը,

հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը<sup>1</sup>,

հաշվի առնելով Տնտեսական և սոցիալական հարցերով կոմիտեի եզրակացությունը<sup>2</sup>,

գործելով Պայմանագրի 251-րդ հոդվածով սահմանված ընթացակարգի համաձայն<sup>3</sup>,

Քանի որ

1) 2000 թվականի մարտի 23-ին և 24-ին Լիսաբոնում կայացած Եվրոպական խորհրդի հանդիպման ընթացքում շեշտվեց ֆինանսական ծառայությունների ներքին շուկայի ձևավորումն ավարտին հասցնելու գործընթացն արագացնելու անհրաժեշտությունը, սահմանվեց վերջնաժամկետ՝ մինչև 2005 թվականն իրականացնել Հանձնաժողովի ֆինանսական ծառայությունների գործողությունների ծրագիրը և կոչ արվեց քայլեր ձեռնարկել բաց բաժնետիրական ընկերությունների կողմից մշակված ֆինանսական հաշվետվություններն առավել համադրելի դարձնելու ուղղությամբ,

2) ներքին շուկայի բնականոն գործունեությանը նպաստելու նպատակով բաց բաժնետիրական ընկերություններն իրենց համախմբված ֆինանսական հաշվետվությունները մշակելու համար պետք է կիրառեն հաշվապահական հաշվառման

---

<sup>1</sup> ՊՏ թիվ C 154 E, 29.05.2001թ., էջ 285:

<sup>2</sup> ՊՏ թիվ C 260, 17.09.2001թ., էջ 86:

<sup>3</sup> Եվրոպական պառլամենտի 2002 թվականի մարտի 12-ի եզրակացություն (պաշտոնական տեղեկագրում դեռ չի հրապարակվել) և Խորհրդի 2002 թվականի հունիսի 7-ի որոշում:

միջազգային բարձր և միասնական ստանդարտներ: Ավելին, կարևոր է, որ ֆինանսական շուկաներում գործունեություն ծավալող Համայնքի ընկերությունների կողմից կիրառվող ֆինանսական հաշվետվությունների ստանդարտներն ընդունվեն միջազգային մակարդակով և դառնան իրապես համաշխարհային մակարդակով կիրառվող ստանդարտներ: Սա ենթադրում է ներկայումս միջազգային մակարդակով կիրառվող հաշվապահական հաշվառման ստանդարտների մոտարկում, որի հիմնական նպատակը հաշվապահական հաշվառման միասնական համաշխարհային ստանդարտները ձևավորելն է,

3) «Որոշակի տեսակի ընկերությունների տարեկան ֆինանսական հաշվետվությունների մասին» Խորհրդի 1978 թվականի հուլիսի 25–ի 78/660/ԵՏՀ հրահանգը<sup>4</sup>, «Համախմբված ֆինանսական հաշվետվությունների մասին» Խորհրդի 1983 թվականի հունիսի 13–ի 83/349/ԵՏՀ հրահանգը<sup>5</sup>, «Բանկերի և այլ ֆինանսական հաստատությունների տարեկան ֆինանսական հաշվետվությունների և համախմբված ֆինանսական հաշվետվությունների մասին» Խորհրդի 1986 թվականի դեկտեմբերի 8–ի 86/635/ԵՏՀ հրահանգը<sup>6</sup> և «Ապահովագրական ընկերությունների տարեկան ֆինանսական հաշվետվությունների ու համախմբված ֆինանսական հաշվետվությունների մասին» Խորհրդի 1991 թվականի դեկտեմբերի 19–ի 91/674/ԵՏՀ հրահանգը<sup>7</sup> նույնպես ուղղված են Համայնքի բաց բաժնետիրական ընկերություններին: Նշված հրահանգներով սահմանված հաշվետվություններ ներկայացնելու պահանջները չեն կարող ապահովել Համայնքի բաց բաժնետիրական ընկերությունների ֆինանսական հաշվետվությունների թափանցիկությունը և համադրելիությունը, որն անհրաժեշտ պայման է՝ արդյունավետորեն, բնականոն կերպով և ֆինանսապես արդյունավետորեն գործող ինտեգրված կապիտալի շուկա ստեղծելու համար: Հետևաբար, անհրաժեշտ է լրացնել բաց բաժնետիրական ընկերությունների գործունեությունը կարգավորող իրավական համակարգը,

4) սույն Կանոնակարգի նպատակը կապիտալի շուկայի ֆինանսապես և տնտեսապես

<sup>4</sup> ՊՏ թիվ L 222, 14.08.1978թ., էջ 11: Վերջին անգամ Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2001/65/ԵՀ հրահանգով (ՊՏ թիվ L 283, 27.10.2001թ., էջ 28) փոփոխված հրահանգ:

<sup>5</sup> ՊՏ թիվ L 193, 18.07.1983թ., էջ 1: Վերջին անգամ Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2001/65/ԵՀ հրահանգով փոփոխված հրահանգ:

<sup>6</sup> ՊՏ թիվ L 372, 31.12.1986թ., էջ 1: Վերջին անգամ Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2001/65/ԵՀ հրահանգով փոփոխված հրահանգ:

<sup>7</sup> ՊՏ թիվ L 374, 31.12.1991թ., էջ 7:

արդյունավետ գործունեությանը նպաստելն է: Այս բնագավառում ներքին շուկայի ձևավորման համար կարևոր է նաև ներդրողների պաշտպանությունը և ֆինանսական շուկաներում վստահության պահպանումը: Սույն Կանոնակարգով ընդգծվում է ներքին շուկայում կապիտալի տեղաշարժի ազատությունը, ինչպես նաև հնարավորություն է տրվում Համայնքի ընկերություններին հավասար պայմաններով մրցելու Համայնքի կապիտալի շուկաների, ինչպես նաև կապիտալի համաշխարհային շուկաների ֆինանսական ռեսուրսների համար,

5) Համայնքի կապիտալի շուկաների մրցունակության համար կարևոր է ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար Եվրոպայում կիրառվող ստանդարտները մոտարկել հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներին, որոնք կարող են համաշխարհային մակարդակով կիրառվել միջսահմանային գործարքների կամ աշխարհի ցանկացած վայրում արժեթղթերի ցուցակման համար,

6) 2000 թվականի հունիսի 13-ին Հանձնաժողովը հրապարակեց «Եվրոպական միությունում ֆինանսական հաշվետվությունների ներկայացման ռազմավարություն. առաջընթացի ճանապարհը» իր հաղորդագրությունը, որտեղ առաջարկվում էր, որ ամենաուշը մինչև 2005 թվականը Համայնքի բոլոր բաց բաժնետիրական ընկերություններն իրենց համախմբված ֆինանսական հաշվետվությունները մշակեն մեկ միասնական հաշվապահական հաշվառման ստանդարտներին, այն է՝ հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներին (ՀՀՄՄ) համապատասխան,

7) հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտները (ՀՀՄՄ-ներ) մշակվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների հարցերով կոմիտեի կողմից (ՀՀՄՄԿ), որի նպատակն է մշակել միասնական հաշվապահական հաշվառման համաշխարհային ստանդարտներ: Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների հարցերով կոմիտեի վերակազմակերպումից հետո 2001 թվականի ապրիլի 1-ին նոր կազմավորված խորհուրդը՝ որպես իր կայացրած առաջին որոշումներից մեկը, Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների հարցերով կոմիտեն վերանվանեց Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհուրդ, իսկ հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների մասով հաշվապահական ՀՄՄ-ները՝ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներ (ՖՀՄՄ): Նշված ստանդարտները

պետք է, հնարավորության դեպքում և պայմանով, որ դրանք ապահովեն Համայնքում ֆինանսական հաշվետվությունների թափանցիկության և համադրելիության բարձր մակարդակ, պարտադիր դարձվեն՝ Համայնքի բոլոր բաց բաժնետիրական ընկերությունների կողմից կիրառման համար,

8) սույն Կանոնակարգի կիրարկման համար անհրաժեշտ միջոցները պետք է ընդունվեն Հանձնաժողովին վերապահված կիրարկման լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ ընթացակարգերը սահմանող՝ Խորհրդի 1999 թվականի հունիսի 28-ի 1999/468/ԵՀ որոշմանը<sup>8</sup> համապատասխան՝ պատշաճ կերպով հաշվի առնելով ֆինանսական ծառայությունների վերաբերյալ օրենսդրության իրականացման մասին 2002 թվականի փետրվարի 5-ին Եվրոպական պառլամենտում Հանձնաժողովի կողմից կատարված հայտարարությունը,

9) Համայնքում կիրառելու նպատակով հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտ առաջին հերթին ընդունելու համար անհրաժեշտ է, որ այն համապատասխանի Խորհրդի նշված հրահանգների հիմնական պահանջներին, այսինքն՝ դրա կիրառումը պետք է հանգեցնի ձեռնարկության ֆինանսական վիճակի և կատարողականի ճշգրիտ և արդարացի պատկերի ստացմանը. նշված սկզբունքը դիտարկվում է Խորհրդի նշված հրահանգների համատեքստում՝ չենթադրելով նշված հրահանգների բոլոր դրույթների հետ համապատասխանություն. երկրորդ՝ 2000 թվականի հուլիսի 17-ի Խորհրդի եզրակացություններին համապատասխան, այն նպաստում է եվրոպական հասարակության շահերի պաշտպանությանը և, ի վերջո, այն բավարարում է ֆինանսական հաշվետվություններից օգտվողների համար օգտակար՝ ֆինանսական հաշվետվություններում ներկայացվող տեղեկատվության որակին ներկայացվող հիմնական չափանիշները,

10) Հաշվապահական հաշվառման հարցերով տեխնիկական կոմիտեն պետք է Հանձնաժողովին հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների գնահատման հարցում աջակցություն և փորձագիտական օժանդակություն տրամադրի,

11) հաստատման մեխանիզմը պետք է արագ կերպով գործի առաջարկված

---

<sup>8</sup> ՊՏ թիվ L 184, 17.07.1999թ., էջ 23:

հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների մասով և պետք է լինի նաև հիմնական կողմերի, մասնավորապես, հաշվապահական հաշվառման ազգային ստանդարտ սահմանողների, արժեթղթերի, բանկային և ապահովագրության ոլորտներում վերահսկողների, կենտրոնական բանկերի, այդ թվում՝ Եվրոպական կենտրոնական բանկի, «հաշվապահություն» մասնագիտության և ֆինանսական հաշվետվություններից օգտվողների ու պատրաստողների միջև տեղեկատվության քննարկման, արտացոլման և փոխանակման միջոց: Մեխանիզմը պետք է լինի Համայնքում ընդունված հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների վերաբերյալ համընդհանուր պատկերացում կազմելու միջոց,

12) համաչափության սկզբունքին համապատասխան՝ հաշվապահական հաշվառման միջազգային միասնական ստանդարտները բաց բաժնետիրական ընկերությունների նկատմամբ կիրառելու պահանջի դեպքում, սույն կանոնակարգով նախատեսվող միջոցների կիրարկումն անհրաժեշտ է Համայնքի կապիտալի շուկաների ֆինանսապես և տնտեսապես արդյունավետ գործունեությանը նպաստելու և դրանով իսկ ներքին շուկայի ձևավորումն ավարտին հասցնելու համար,

13) նույն սկզբունքին համապատասխան՝ անհրաժեշտ է, որ տարեկան ֆինանսական հաշվետվությունների մասով անդամ պետությունները հնարավորություն ունենան թույլատրելու կամ պահանջելու բաց բաժնետիրական ընկերություններից իրենց ֆինանսական հաշվետվությունները մշակել՝ սույն Կանոնակարգով սահմանված ընթացակարգով ընդունված հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներին համապատասխան: Անդամ պետությունները կարող են նաև նշված թույլտվությունը կամ պահանջը կիրառել այլ ընկերությունների նկատմամբ՝ իրենց համախմբված ֆինանսական հաշվետվությունները և (կամ) իրենց տարեկան ֆինանսական հաշվետվությունները մշակելու մասով,

14) տեսակետների փոխանակումը դյուրինացնելու և անդամ պետություններին իրենց դիրքորոշումները համաձայնեցնելու հնարավորություն տալու համար՝ Հանձնաժողովը պետք է Հաշվապահական հաշվառումը կարգավորող կոմիտեին պարբերաբար տեղեկացնի իրականացվող ծրագրերի, քննարկման փաստաթղթերի, ընդհանուր հարցերի և Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի հաշվետվությունների նախագծերի և հաշվապահական հաշվառման հարցերով

տեխնիկական կոմիտեի հետագա տեխնիկական աշխատանքի մասին: Կարևոր է նաև, որ Հաշվապահական հաշվառումը կարգավորող կոմիտեն սկզբնական փուլում տեղեկացվի Հանձնաժողովի՝ հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտ ընդունելու առաջարկ չանելու մտադրության մասին,

15) Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներ (ՖՀՄՍ և Մեկնաբանությունները) մշակելու գործընթացում Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի կողմից ներկայացված փաստաթղթերի մասին քննարկումների ժամանակ և դրանց վերաբերյալ դիրքորոշումների ձևավորման գործում Հանձնաժողովը պետք է հաշվի առնի ինչպես համաշխարհային շուկայում գործող եվրոպական ընկերությունների համար մրցակցային առումով անբարենպաստ պայմաններից խուսափելու կարևորությունը, այնպես էլ Հաշվապահական հաշվառման հարցերը կարգավորող կոմիտեի պատվիրակությունների արտահայտած տեսակետները: Հանձնաժողովը կներկայացվի Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի համապատասխան մարմիններում,

16) կիրարկման պատշաճ և ճշգրիտ ռեժիմն առանցքային գործոն է՝ ֆինանսական շուկաներում ներդրողների վստահությունն ամրապնդելու համար: Պայմանագրի 10-րդ հոդվածի ուժով՝ անդամ պետություններից պահանջվում է ձեռնարկել համապատասխան միջոցներ՝ ապահովելու հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների հետ համապատասխանությունը: Հանձնաժողովը նպատակ ունի կապ հաստատել անդամ պետությունների հետ՝ հատկապես Արժեթղթերի եվրոպական կարգավորող մարմինների կոմիտեի (ԱԵԿՄԿ) միջոցով հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների կիրառման առնչությամբ ընդհանուր մոտեցում մշակելու համար,

17) ավելին, պետք է թույլատրել անդամ պետություններին հետաձգել որոշ դրույթների կիրարկումը մինչև 2007 թվականը՝ Համայնքում և երրորդ երկրի կարգավորվող շուկայում գործող այնպիսի բաց բաժնետիրական ընկերությունների համար, որոնք արդեն իրենց համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար որպես առաջնային հիմք կիրառում են միջազգային մակարդակով ընդունված այլ ստանդարտներ, ինչպես նաև այնպիսի ընկերությունների համար, որոնց արժեթղթերի վաճառքն իրականացվում է միայն բաց շուկայում: Այնուամենայնիվ, կարևոր է, որ

ամենաուշը մինչև 2007 թվականը Համայնքի կարգավորվող շուկայում գործող Համայնքի բոլոր բաց բաժնետիրական ընկերությունները կիրառեն միասնական հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտները,

18) անդամ պետություններին և ընկերություններին հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտները կիրառելու համար անհրաժեշտ փոփոխությունների կատարումը թույլատրելու նպատակով անհրաժեշտ է կիրառել որոշ դրույթներ միայն 2005 թվականին: Սույն Կանոնակարգն ուժի մեջ մտնելով՝ պետք է սահմանվեն համապատասխան դրույթներ՝ ընկերությունների կողմից առաջին անգամ հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտները կիրառելու համար: Նշված դրույթները պետք է մշակվեն միջազգային մակարդակով, որպեսզի հնարավոր լինի ապահովել ընդունված որոշումների միջազգային ճանաչումը,

ԸՆԴՈՒՆԵՑԻՆ ՍՈՒՅՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ.

### *Հոդված 1*

#### **Նպատակը**

Սույն Կանոնակարգի նպատակը Համայնքում հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների ընդունումն ու կիրառումն է՝ 4-րդ հոդվածում նշված ընկերությունների կողմից տրամադրվող ֆինանսական տեղեկատվությունը ներդաշնակեցնելու համար՝ այդպիսով ապահովելով ֆինանսական հաշվետվությունների թափանցիկությունը և համադրելիությունը և, հետևաբար, Համայնքի կապիտալի շուկայի ու ներքին շուկայի արդյունավետ գործունեությունը:

### *Հոդված 2*

#### **Սահմանումները**

Սույն Կանոնակարգի նպատակով «հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտները» ներառում են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտները (ՀՀՄՍ), Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտները (ՖՀՄՍ) և դրանց վերաբերյալ մեկնաբանությունները (Մեկնաբանությունների մշտական հանձնաժողովի և Ֆինանսական

հաշվետվությունների մեկնաբանությունների միջազգային կոմիտեի մեկնաբանությունները), այդ ստանդարտների և դրանց վերաբերյալ մեկնաբանությունների հետագա փոփոխությունները, ինչպես նաև Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հետագայում ընդունվող ստանդարտները և դրանց մեկնաբանությունները:

### *Հոդված 3*

#### **Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների ընդունումը և կիրառումը**

1. Հանձնաժողովը որոշում է կայացնում Համայնքում հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների կիրառելիության վերաբերյալ: Սույն Կանոնակարգի ոչ էական տարրերը փոփոխելու համար նախատեսված միջոցները պետք է ընդունվեն՝ 6(2) հոդվածում նշված՝ պատշաճ կերպով իրականացվող կարգավորիչ ընթացակարգին համապատասխան:

2. Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտները կարող են ընդունվել միայն, եթե

— դրանք չեն հակասում 78/660/ԵՏՀ հրահանգի 2(3) հոդվածով և 83/349/ԵՏՀ հրահանգի 16(3) հոդվածով սահմանված սկզբունքին և նպաստում են Եվրոպական հասարակության բարօրությանը,

— դրանք բավարարում են տնտեսական որոշումներ կայացնելու և կառավարման համապատասխանելիությունը գնահատելու համար անհրաժեշտ ֆինանսական տեղեկատվության ըմբռնելի, կարևոր, վստահելի և համադրելի լինելու չափորոշիչը:

3. Ամենաուշը մինչև 2002 թվականի դեկտեմբերի 31-ը Հանձնաժողովը, 6(2) հոդվածով սահմանված ընթացակարգին համապատասխան, որոշում է կայացնում՝ սույն Կանոնակարգն ուժի մեջ մտնելուց հետո Համայնքում հաշվապահական հաշվառման միջազգային գործող ստանդարտները կիրառելու վերաբերյալ:

4. Ընդունված հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներն ամբողջությամբ հրապարակվում են Եվրոպական համայնքների պաշտոնական տեղեկագրում Համայնքի պաշտոնական բոլոր լեզուներով՝ որպես Հանձնաժողովի կանոնակարգ:

#### *Հոդված 4*

### **Բաց բաժնետիրական ընկերությունների համախմբված ֆինանսական հաշվետվությունները**

2005 թվականի հունվարի 1-ին կամ դրանից հետո յուրաքանչյուր ֆինանսական տարվա համար անդամ պետության իրավունքով կարգավորվող ընկերություններն իրենց համախմբված ֆինանսական հաշվետվությունները պետք է մշակեն հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներին համապատասխան՝ 6(2) հոդվածով սահմանված ընթացակարգով, եթե իրենց հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ նշված ընկերությունների արժեթղթերն ընդունվում են որևէ անդամ պետության կարգավորվող շուկայում՝ Արժեթղթերի ոլորտում ներդրումային ծառայությունների մասին Խորհրդի 1993 թվականի մայիսի 10-ի 93/22/ԵՏՀ հրահանգի 1(13) հոդվածի իմաստով<sup>9</sup>:

#### *Հոդված 5*

### **Տարեկան ֆինանսական հաշվետվությունների և փակ բաժնետիրական ընկերությունների մասով առկա տարբերակները**

Անդամ պետությունները կարող են թույլատրել կամ պահանջել, որ

ա) 4-րդ հոդվածում նշված ընկերությունները մշակեն իրենց տարեկան ֆինանսական հաշվետվությունները,

բ) 4-րդ հոդվածում նշված ընկերություններից բացի այլ ընկերություններ մշակեն իրենց համախմբված ֆինանսական հաշվետվությունները և (կամ) տարեկան ֆինանսական հաշվետվությունները

6(2) հոդվածով սահմանված ընթացակարգով ընդունված՝ հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներին համապատասխան:

---

<sup>9</sup> ՊՏ թիվ L 141, 11.06.1993թ., էջ 27: Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2000/64/ԵՏ հրահանգով վերջին անգամ փոփոխված հրահանգ (ՊՏ, L 290, 17.11.2000թ., էջ 27):

### *Հոդված 6*

#### **Կոմիտեի ընթացակարգը**

1. Հանձնաժողովին աջակցում է Հաշվապահական հաշվառումը կարգավորող կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտե):
2. Եթե հղում է կատարվում սույն պարբերությանը, կիրառվում են 1999/468/ԵՀ որոշման 5ա(1)-(4) հոդվածը և 7-րդ հոդվածը՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:

### *Հոդված 7*

#### **Զեկույցներ ներկայացնելը և համաձայնեցնելը**

1. Հանձնաժողովը պարբերաբար կապ է հաստատում Կոմիտեի հետ՝ տեղեկանալու ՀՀՄՄԽ-ի ծրագրերի ընթացքի և դրանց վերաբերյալ վերջինիս կողմից տրամադրված փաստաթղթերի մասին՝ նպատակ ունենալով համաձայնեցնել այն ստանդարտների ընդունման վերաբերյալ առկա դիրքորոշումները, որոնք կարող են բխել նշված ծրագրերից, և դիտարկել դրանց շուրջ քննարկումների գործընթացը:
2. Հանձնաժողովը պատշաճ կերպով և ժամանակին տեղեկացնում է Կոմիտեին, եթե մտադիր չէ առաջարկ ներկայացնել ստանդարտի ընդունման վերաբերյալ:

### *Հոդված 8*

#### **Ծանուցումը**

Եթե անդամ պետությունները ձեռնարկում են միջոցներ 5-րդ հոդվածի ուժով, նրանք այդ մասին անհապաղ տեղեկացնում են Հանձնաժողովին և այլ անդամ պետությունների:

### *Հոդված 9*

#### **Անցումային դրույթները**

Շեղում կատարելով 1-ին պարբերությունից՝ անդամ պետությունները կարող են սահմանել, որ 2007 թվականի հունվարի 1-ին կամ դրանից հետո յուրաքանչյուր ֆինանսական տարվա համար 4-րդ հոդվածի պահանջները կիրառվեն միայն այն

ընկերությունների նկատմամբ՝

ա) որոնց պարտքային արժեթղթերն ընդունվում են որևէ անդամ պետության կարգավորվող շուկայում՝ 93/22/ԵՏՀ հրահանգի 1(13) հոդվածի իմաստով.

բ) որոնց արժեթղթերն ընդունվում են ոչ անդամ պետության բաց շուկայում, և որոնք այս նպատակով կիրառում էին միջազգային մակարդակով ընդունված հաշվապահական հաշվառման ստանդարտներ այն ֆինանսական տարվանից ի վեր, որն սկսվել էր նախքան Եվրոպական համայնքների պաշտոնական տեղեկագրում սույն Կանոնակարգի հրապարակումը:

#### *Հոդված 10*

##### **Տեղեկատվության տրամադրումը և գնահատումը**

Հանձնաժողովը գնահատում է սույն Կանոնակարգի գործողության ընթացքը և ամենաուշը 2007 թվականի հուլիսի 1-ին դրա վերաբերյալ զեկույց է ներկայացնում Եվրոպական պառլամենտին և Խորհրդին:

#### *Հոդված 11*

##### **Ուժի մեջ մտնելը**

Սույն Կանոնակարգն ուժի մեջ է մտնում Եվրոպական համայնքների պաշտոնական տեղեկագրում հրապարակվելուց հետո երրորդ օրը:

Սույն Կանոնակարգն ամբողջությամբ պարտադիր է և բոլոր անդամ պետություններում գործում է անմիջականորեն: